ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

«29» մայիսի 2013 թ. N 33

ք. Արմավիր

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.15 կետի «ժբ» ենթակետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 2013 թվականի մայիսի 21 N 1/7.4/6908-13 գրությունը, 2013 թվականի ընթացքում Հայաստանի Հանրապետության կառավարության համապատասխան ծրագրերով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզում դիզելային վառելանյութի և ազոտական պարարտանյութի բաշխման օրինականությունը ստուգելու նպատակով.

կարգադրում եմ՝

1. Ստեղծել հանձնաժողով՝ համաձայն հավելվածի:
2. Հանձնաժողովին (Ա. Այվազյան)՝ սույն կարգադրությամբ նախատեսված աշխատանքներին մասնակից դարձնել Հայաստանի Հանրապետության Ազգային անվտանգության ծառայության Արմավիրի մարզային վարչության աշխատակիցներին (համաձայնությամբ):
3. Հանձնաժողովին (Ա. Այվազյան)՝ սույն կարգադրությամբ նախատեսված աշխատանքներն իրականացնել 10-օրյա ժամկետում և արդյունքների մասին զեկուցել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետին:
4. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝ **Ա. ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆ**

Հավելված
Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի
2013 թվականի մայիսի 29-ի
N 33 կարգադրության

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄ

Հանձնաժողովի նախագահ՝

Ա. Այվազյան	-Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ.

Անդամներ՝

Գ. Հովհաննիսյան	-Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչության ՏԻ և համայնքային ծառայության հարցերի բաժնի պետ.
Վ. Մանուկյան	- Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ծառայության Արմավիրի մարզային վարչության աշխատակից

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Փ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ**